№ 31 ՄԱՐՏԻ 2 (14) 1878 ՄԱՐՏԻ 2 (14) № 31

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ բաւական չէ։ — Ներքին տեսութիւն։ Հայոց թատրօն։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Իտալիա։ Արտաքին լուրեր։ — Խառն լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Ցայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Ժողովրդական վարժապետներ։

ԱՅԴ ԲԱՒԱԿԱՆ ՉԷ

Կար մի ժամանակ երբ հայոց ազգը իր բոլոր փրկութիւնը տեսնում էր եկեղեցու մէջ։ Ազգութիւնը պահպանել կարելի էր միմիայն եկեղեցու միջոցով։ Եւ եկեղեցի բառով հայը հասկանում էր ոչ թէ կրօնի հիմնարկութիւնը, ոչ թէ եկեղեցու հոգևոր, բարոյական ոյժը, կամ ժողովրդի վրա կրօնի, աւետարանի ներգործութիւնը,—այլ միայն տաճարը, եկեղեցու շինութիւնը։ Ամենամեծ ազգասէր համարվում էր այն մարդը որ իր ծախսով կառուցանում էր մի նոր եկեղեցի, հասարակութեան ամենաօգտաւէտ անդամ համարվում էր այն մարդը, որ մեռնելով կտակում էր իր կարողութեան մի մաս իր քաղաքում մի նոր եկեղեցի շինելու համար։

Բայց շուտով հասկացան հայերը, որ առանց ուսումնարանի եկեղեցին գրեթէ ոչինչ ներգործութիւն չէ կարող ունենալ։ Տգէտ հովիւ և տգէտ հօտ,—ահա՛ ինչ էր ներկայացնում մեզ մեր եկեղեցին....

Եւ ահա՛ ամեն տեղից ձայներ լսվեցան՝ մեզ ուսումնարաններ են հարկաւոր, մեզ կը փրկեն դպրոցներ։ Կտակ անողները սկսեցին գումարներ կտակել ուսումնարանների համար, ամեն քաղաքում, գրեթէ ամեն գիւղում հիմնվեցան թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցներ....

Այժմ մենք ունենք անթիւ դպրոցներ,—բայց այնու ամենայնիւ փրկված չենք, այսինքն ոչ աւելի բարոյական ենք, ոչ էլ աւելի լուսաւորված ենք քան թէ առաջ։ Ճշմարիտ է մեզանում տարածվեցաւ ուսում, ամբոխի մէջ սերմանվեցան գիտութեան տարրական հիմունքներ,—բայց իսկական լուսաւորութիւնը, այսինքն մտքի և բարոյականութեան զուգընթաց զարգացումը մինչև այժմ պակաս է մեզ։

Մենք աւելի ուսումնարաններ ունենք քան թէ մեզ հարկաւոր է,—բայց ի՞նչ օգուտ... մենք դարձեալ մնացինք նոյն անբարոյական մարդիկ, ինչ որ էինք երբ դեռ ոչ մի հատ ուսումնարան չը կար մեզանում....

Այժմ միայն հասկացանք որ բաւական չէ ուսումնարաններ հիմնել և բազմացնել, ժողովրդի համար բաւական չեն դպրոցներ, նրան բաւական չէ ուսում,—նրան հարկաւոր է և դաստիարակութիւնը, նրան հարկաւոր է կրթութիւնը, որից նա զուրկ է մնում իր ընտանիքում։

Այդ դաստիարակութիւնը, որից հայը երեխայ ժամանակ զուրկ է մնում իր անկիրթ, անբարոյական ընտանիքում, այդ դաստիարակութիւնը, այդ բարոյական կրթութիւնը հայը պէտք է ստանայ հասակ առած մարդ դառնալուց յետոյ։

Որո՞նք են այդ բարոյական կրթութեան գործիչները։

Այդ կրթութեան գործիչները սրանք են՝ լրագրութիւնը, գրականութիւնը, թատրօնը և հրապարակական դասախօսութիւնները։

Իսկ մինչև այժմ հայը ոչ թէ միայն չէ պահպանում այդ կրթողական միջոցները, ոչ թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ

(Շարունակութիւն և վերջ)

Մենք մեր ընթերցողին ցոյց տուեցինք, թէ որպէս են վարվում վարժապետների ընտրութեան մէջ դպրոցների կառավարութեան հինգ գլխաւոր գործիչներն,—այսինքն՝ հոգաբարձութիւնը, տեսուչը, հոգևոր իշխանութեան ներկայացուցիչը, «աղաները» և խռովարար քահանաները։ Այժմ խօսենք այն բանի վրա, թէ ինչ հետևանք են ունենում, այս տեսակ ընտրութիւնները։

Շատ հասկանալի է, թէ ինչ.—նախ, դպրոցը չէ ծառայում իր բուն նշանակութեանը, իր իսկական նպատակին, այլ նա դառնում է զանազան կրքերի խաղալիկ։ Նա դառնում է մի հիմնարկութիւն, որի միջից կռիւը, խռովութիւնը անպակաս են լինում։ Երկրորդ, տարակոյս չը կայ, որ չահեկան նպատակներով ընտրված վարժապետներ չեն կարող իրանց պաշտօնին ընդունակ մարդիկ լինել.—բայց այս վարժապետները առաջ են բերում ուրիշ շատ անկարգութիւններ ևս։ Ի՞նչ։

Ինձ պատահել է քննել մի քանի դպրոցների ծրագիրները. ինչ էք կարծում, այդ ողորմելի ծրագիրները իւրաքանչիւր տարվայ ընթացքում, և երբեմն մի և նոյն տարվայ մէջ երկու անգամ փոխվել են։ Ծրագիրները անդադար փոխվել են, որքան անգամ փոխվել են վերոյիշեալ հանգամանքներով վարժապետները։ Նոր մտած վարժապետները, իրանց նախորդների անընդունակութիւնը ցոյց տալու համար, սկսել են իրանց խելքին զօռ տալ մի նոր ձև և մի նոր պրոգրամայ մտցնել։ Եւ այսպէս, հին վարժապետների հիմնածը միշտ նորերն քանդելով, առիթ են տուել անվերջ փոփոխութիւնների։ Վարժապետները չեն ենթարկվել դպրոցի մէջ ընդունված մի որոշ պրոգրամայի կանոններին, այլ միշտ պրոգրաման է ենթասրկվել վարժապետների կամայականութեանը։—Այսպիսի դէպքերում, յայտնի բան է, դպրոցը կը կորցնէ իր նշանակութիւնը, և մի որոշ նպատակի ծառայել կարող չէ։

Այս գրութեան մէջ շատ հասկանալի է և աշակերտների վիճակը, նրանք անդադար պէտք է փոխեն իրանց ուսանելի առարկաները,—մէկը պէտք է կիսատ թողնեն և միւսը սկսեն, և շատ անգամ ստիպված պիտի լինեն մի և նոյն առարկան զանազան վարժապետից զանազան կերպով սովորել։ Նոր վարժապետը, ասելով, թէ իր նախորդը չէ հասկացել, վատ է դաս տուել,—միշտ սկսում է գլխից, և սկսում է բոլորովին ուրիշ եղանակով։ Ո՞րքան դժուար է աշակերտին մոռանալ տալ մի առարկայ, որի վրա տարիներով տանջվել է, և նոյնը նորից սկսել նոր ձևով։

Նոր վարժապետը չէ շարունակում հնի սկըսածը, այլ միշտ վերադառնում է սկզբին։ Այդ առաջանում է վարժապետների տարբեր կրթութենից, որոնք չեն ենթարկվում մի որոշ մանկավարժական եղանակի, այլ ամեն մէկը ուսուցանում է որպէս ինքն է սովորել։ Եւ չէր կարող լինել նրանց դաստուրութեան եղանակների մէջ միակերպութիւն, որովհետև չեն պատկանում մի որոշ չկօլայի։

Վարժապետների այս տեսակ վարմունքը առաջանում է շատ անգամ նրանից, որ երբեմն ինքը վարժապետը չը գիտէ իր առարկան և կամենում է շարլատանութեամբ անցկացնել.—նրան հեշտ է մի առարկայ գլխից սկսել, քան թէ շարունակել, որովհետև, երբ գլխից է սկսում, ինքն փոքր առ փոքր սովորելով, կարողանում է դաս տալ։ Այս տեսակ վարժապետները, որպէս ռամկօրէն ասում են, իրանց «դալլաքութիւնը» ողորմելի դպրոցի գլխի վրա են սկսում սովորել. և կարողանում են շարունակել, որովհետև նրանց վրա կօնտրոլ չը կայ. նրանք դպրոցի վարչութեան մէջ պաշտպաններ ունեն, և իրանց «խաթրի» համար են պաշտօն տուել....

Եւ այսպէս, նոր վարժապետը միշտ հնի աշխատութիւնը մերժում է և ուսման ընթացքը խանգարում է։ Աշակերտի հաւատարմութիւնը և սէրը դէպի իր ուսանելի առարկան կորչում է, որովհետև նրան անդադար ասում են, թէ քեզ ծուռն են սովորացրել, պէտք է նորից սովորես։ Եւ իւրաքանչիւր վարժապետ, մի կամ երկու տարի մի դպրոցում մնալով, ամեն ինչ քանդում է, տակնուվրա է անում, և վերջը զզուեցնելով, թողնում և հեռանում է։ Եւ եթէ նրանից յետոյ եկողը մի խղճմտանքով մարդ է լինում, նա հազիւ թէ կարողանում է իր նախորդի քանդածները շինել....

* *

Վերոյիշեալ հանգամանքների մէջ, ի հարկէ, դպրոցներում ոչ միայն ուսանելի առարկաների համակարգութիւն և մինը միւսին համապատասխան ներդաշնակութիւն չէ կարող լինել,—այլև դպրոցները մինչև անգամ չեն կարող տալ ժողովրդին և այն բանը, որ կոչվում է հասարակ դպրութիւն կամ գրագիտութիւն (грамотность)։ Այսպիսի դպրոցները միշտ զուրկ կը մնան որոշ ուղղութիւնից, և ուսանելի առարկաների մէջ ներքին կապ չէ կարող լինել, այլ նրանք այնպէս խառնիխուռն կերպով ածված կը լինեն ողորմելի աշակերտների գլխում, որպէս անկապ մթերք։ Այլ ևս չեմ խօսում վարժապետների մանկավարժական եղանակների վրա, որոց ամեն մինը իր էշը իր եղանակովն է քշում...

Մեզանում մի առած կայ, թէ «ագռաւն ուզեց կաքաւի երիշով (ընթացքով) գնալ, իր երիշն էլ կորցրեց։»—Միշտ այդպէս է լինում, երբ մարդ իր սովորականը թողնում է, և նախքան սովորելու օտարի վարմունքի ձևերը, սկսում է ինքն էլ նոյն ձևերով ընթանալ։ Նա ծիծաղ է շարժում և աւելի ոչինչ։

Նոր, եւրօպական կոչված մանկավարժական արհեստի մէջ մեր վարժապետները մի և նոյնն են անում.—իրանք դեռ սովորելու կարօտ ուսուցչի պաշտօն են յանձն առնում։ Եւ արտաքին ցոյցերով միայն կամենում են նմանվել, թէ հմուտ մանկավարժներ են. իսկ նմանվելն ցած կապիկութիւն է, որ միայն կարող է ծիծաղ շարժել։

Խօսելով առհասարակ մեր վարժապետների վրա, չէ կարելի չը նկատել մի խոշոր երևոյթ, որը խիստ անմխիթար տպաւորութիւն է գործում։ Մեր մէջ մինչև այսօր յայտնված, և իրանց գործին փոքր ի շատէ հմուտ ու խղճմտանքով վարժապետների թիւը այնքան փոքր է, որ կարելի է մատներով համբարել.—Բէգնազարեանց, Աղայեանց, Ղուկասեանց, Տէր-Ղևոնդեանց, Պռօշեանց, Պալասանեանց, Բարխուդարեանց, Շահվէրդեանց, Չիգիանեանց, Մ. Սիմօնեանց և մի քանի ուրիշներ։ Այդ պարոնները, բացի երկուսից, ոչ մասնագէտներ են և ոչ բարձր ուսում ստացած համալսարանականներ.—դրանք աւելի ժողովրդական թերուսներ են։ Եւ զարմանալին այն է, որ գրականութեան մէջ դարձեալ մի և նոյն անձինքն են յայտնվում.—ունեն ինքնուրոյն և թարգմանական աշխատութիւններ, գրում են լրագիրների և ամսագիրների մէջ, և իրանք ոչ այս և ոչ այն մանկավարժ արհեստագէտի աշակերտ լինելով, տուեցին մեր դպրոցներին մի քանի դասագրքեր։ Որոյ հակառակ, բարձր ուսում ստացած մանկավարժ-մասնագէտներից մինչև այսօր ոչ մէկը չը յայտնվեցաւ ոչ վարժապետական ասպարէզում և ոչ գրականութեան մէջ։ Այստեղ ճշմարտվում է «Մշակի» այն կարծիքը, որ ժողովրդական թերուսների մէջ գտնում է ուժ, եռանդ և ապագայ...։ Ցոյց տալու համար, թէ այդ այդպէս է, մենք հարկաւոր ենք համարում փոքր ինչ պարզել, թէ ինչ է մասնագէտը և ինչ է թերուսը։

* *

Մասնագէտը, փոխաբերական ձևով խօսելով, մի շտեմարան է, որի մէջ ամբարված են իր արհեստի վերաբերեալ զանազան մթերք, որոնք օտարի արդիւնաբերութեան գործն են։ Նրա գլուխը մի պարկ է, որ լցրած է նոյն մթերքով, եթէ թափ տուեցիր պարկը—դատարկ կը մնայ։ Նա խօսում է, դատում է, վճռում է միշտ օտարի խելքով. ինքը սեփական դատողութիւն չունի։ Նա միշտ գրքերի և հեղինակների անուններ է յիշում,—նա միշտ վկայութիւններ է բերում, իսկ իր կարծիքը չէ յայտնում։ Նա պատերազմում է արհեստական զէնքով. առ նրա ձեռքից զէնքը,—նա կը դառնայ մի թոյլ արարած...

Մասնագէտը զգոյշ է և երկչոտ. նա իր սեփական ուժերի վրա ինքնավստահութիւն չունի։ Երբ պէտք է նրան մի բան գրել, իսկոյն սկսում է գրքերը փորփրել, որ նրանց միջից մաքեր դուրս բերէ. և այս պատճառով նրա գրվածքը լինում է կցկտուր և շատ անգամ մթին ու անկապ։ Նա կարող է լաւ թարգմանել և օտարի աշխատութիւններից ծաղկաքաղ անել, բայց ոչ ստեղծել։ Նրա մէջ ինքնուրոյնութիւն չը կայ։ Եւ այս է պատճառը, երբ մասնագէտը

միայն չէ նպաստում այդ ազգային ձեռնարկութիւնների զարգացնելուն,—բայց կատարելապէս անտարբեր է մնում դէպի այդ բարոյական պահանջները, կամ մինչև անգամ աշխատում է խեղդել ազգային մամուլը, ազգային թատրոնը և ազգային գրականութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, փետրվարի 24-ին հայ թատրոնասէրների ընկերութիւնը գերմանական կլուբի դահլիճում յօգուտ Հալաբարի Ս. Մարիամեան օր. ուսումնարանի տուեց մի ներկայացումն, որ կազմած էր Երեցփոխեանի «Ա.յ քիզ օին» մէկ արարուածով վոդրվելից, Մոլիէրի «Բռնի ամուսնութիւն» նոյնպէս մէկ արարուածով վոդրվելից և զաւեշտից: Զբնայելով, որ տոմակները և աֆիշաները շատ ուշ էին պատրաստվել, այնու ամենայնիւ դահլիճը լեցն էր: Թէպէտ առաջին վոդրվելը շատ անտաշ և անմիտ մի գրվածք է, իսկ երկրորդը բաւական մաշված է շատ անգամ բեմի վրա երևալուց, հասարակութիւնը շատ բաւական մնաց և մեզ վրա այդ ներկայացումն մի լաւ տպաւորութիւն թողեց:

Հայոց թատրոնը երկար ժամանակ զզվելուց յետոյ, վերջապէս արժանացաւ իր բեմի վրա ունենալ մի օրինաւոր պատրաստած ներկայացումն: Առհասարակ անսամբլը շատ լաւ էր և առանձնապէս աչքի էր ընկնում պ. պ. Զմշկեանի և Տէր-Դաւթեանի գեղեցիկ խաղը: Պ. Տէր-Դաւթեանը առանձին ուշադրութիւն էր դարձրել գրիմի վրա: Նրա բոլոր շարժվածքները, ձայնը, ձևերը բոլորովին համեմատ էին միմեանց. պարոնը ամեն մէկ խօսք արտասանելով հասարակութեան ուրախ ծիծաղով և ծափահարութիւններով էր վարձատրվում: Պ. Զմշկեանը «Բռնի ամուսնութեան» մէջ շատ լաւ էր, նրա միակ պակասութիւնը այն էր, որ բարկացած ժամանակ բառերը շուտ շուտ արտասանելով, ժողովուրդը շատ բան չէր լսում: Կար նոյնպէս մէկ անյարմարութիւն, որ անսովոր մարդու աչքը չէ ընկնում, դա Դօրիմէ օրիորդի սպիտակ մազերն էին, որ բոլորովին չէր համեմատվում միւսների հագուստի հետ: Անտրակտում պ. Աթանասեանցը կարդաց Պռօշեանցի «Հայը ի՞նչ է տեսնում Վրաստանում» հեղինակութիւնը, որ հասարակութեանը բաւական ձանձրոյթ պատճառեց և որը գրված էր այն մաշված նիւթի վրա որ հայը, նրա կինը և հոգևորականը Վրաստանում վրացերէն են խօսում: Պ. Աթանասեանցը շատ վատ ընտրութիւն էր արել: Այդ գրվածքը, որ չերևաց ոտանաւոր է թէ արձակ, աւելի յարմար է եկեղեցում մի տիրացուի բերանից լսել քան թէ թատրոնի բեմից: Աթանասեանից յետոյ տ. Զմշկեանը կարդաց մի կտոր Սբովեանի «Վէրք Հայաստանից», իսկ պ. Զմշկեան իրան յատուկ գեղեցիկ դիկցիայով, ամեն մէկ բառը շեշտելով և ամեն խօսքին նշանակութիւն տալով կարդաց Գամառ-Քաթիպայի «Հայերուս թուքը» ոտանաւորը:

Վերևը մենք յիշեցինք մի քանի պակասութիւններ, որոնք շատ աննշան էին: Մի շարք խայտառակ ներկայացումներ տեսնելուց յետոյ, շատ ուրախ ենք, որ այս վերջին ներկայացումն օրինաւոր գնաց և հասարակութեան մէջ թողած վատ տպաւորութիւնը ջնջեց: Եթէ մենք շարունակենք դերերը այսպէս պատրաստել, հասարակութիւնը միշտ կը լցնի թատրոնի դահլիճը: Հարկաւոր է գրաւել ժողովրդի համակրութիւնը դէպի թատրոնը, մանաւանդ որ շուտով երևի մենք էս կոնեենանք սեփական թատրոն: Մի քանի խօսք էլ «Բռնի ամուսնութեան» մէջ պ. Արծրունի կատարեց երիտասարդի ընչին դերը: Նրա խաղը, ձայնը և տեսքը այնպէս լաւ էին, որ մեզ տեղիք տուին մտածելու, որ պարոնը եթէ կամենայ շարունակել այդ գործը աջողութեամբ կարող է ժամանակով պ. Զմշկեանի բոլոր դերերը կատարել:

Ց. Տէր-Գրիգորեան

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Փետրվարի 14-ին

Արևելեան հարցը կարծես մոտենում է իր վախճանին. ամէն ազգ, որ և իցէ կերպով կապ ունի նրա հետ, աշխատում է օգուտ քաղել նրանից. ոչ միայն սլաւոն ազգերը, այլ և յոյները, մինչև անգամ լեհերը կամենում են բարձրացնել իրանց ձայնը առաջիկայ դեսպանաժողովում, իսկ հայերը, որոնք թէ իրանց աշխարհագրական և թէ քաղաքական դրութեամբ ամենից աւելի պէտք է իրաւունք ունենային դեսպանաժողովի ուշադրութեան առարկայ լինելու, կարծես աւելի մոռացված են այժմ, քան թէ պատերազմից առաջ: Այն ժամանակ գոնէ գրականական ճանապարհով հայերը բարձրացրել էին իրանց հարցը, իսկ այժմ ոչ միայն իրանք չեն դիմում, այլ և հրաժարվում են լսել մի մեծ պետութեան, որ յորդորում է նրանց յարուցանել Հայաստանի ինքնավարութեան հարցը և խոստանում է իր պաշտպանութիւնը:

Երբ հեռագիրը հաղորդեց, թէ հայոց ազգային ժողովը մերժել է Լայարդի առաջարկութիւնը, ամէն հայ տարակուսած հարցնում էր իրեան, թէ ինչ կարող էր լինել այդպիսի տարօրինակ երևոյթի պատճառը և մտածում էր, թէ երևի այդտեղ կայ մի խոր քաղաքական հիմունք, որ անհասանելի է հասարակ մահկանացուների համար:

«Մշակի» 14-րորդ համարում Թիւրքիայի Թղթակիցը աշխատում է բացատրել այդ երևոյթը, բայց տարաբաղտաբար չէ հասնում իր նպատակին, որովհետև յիրաւի, ծիծաղելի կը լինէր ենթադրել, թէ Թիւրքիայի հայերը ընտակար են համարում ինքնավարութիւն խնդրելը միմիայն այն պատճառով, որ դորանով կարող են գրգռել Ռուսաստանի դժգոհութիւնը....

Մենք աւելի հակամիտ ենք կարծել, թէ Թիւրքիայի Թղթակցին իրան անծանօթ է ազգային ժողովի մերժելու բուն պատճառը, բայց այնու ամենայնիւ համարձակվում ենք աւելցնել, որ ոչինչ քաղաքական հաշիւներ չեն կարող արդարացնել այդպիսի անզգոյշ վարմունքը: Մեր կարծիքով հայերը ոչ միայն պէտք է շնորհակալութեամբ ընդունէին Լայարդի առաջարկութիւնը, այլ և իրանք պէտք է դիմէին նոյն օրինակ մի խնդիրքով մեծ պետութիւններին ուրեմն և Անգլիային և Ռուսաստանին: Ինչ որ վերաբերում է վերջինիս, սորան երևի առանձին կը դիմեն նոյն իսկ Ռուսաստանի հայերը: Այդ խնդիրը արդէն յարուցված է Պետերբուրգում:

Երկու շաբաթ առաջ այստեղ առաջարկութիւն եղաւ, որ բոլոր ռուսիահպատակ հայերը մի ուղերձ կազմեն առ Ամենողորմած Կայսրը խնդրելով առաջիկայ դեսպանաժողովում միւս քրիստոնեայ ազգերի շարքում հոգալ և տաճկահպատակ հայերի վիճակի բարւոքելու մասին, այսինքն մոտաւորապէս կրկնել այն, ինչ որ արեց պատերազմից առաջ միայն Թիֆլիսի հայ-հասարակութիւնը, և որը Նորին Մեծութիւնը բարեհաճեց հաճութեամբ ընդունել: Հաւատի ենք, որ ամեն հայ ուրախութեամբ յանձն կառնի այդպիսի մի քաղցր ու թեթև ծառայութեամբ օգնել իր միլիոնաւոր տանջված եղբայրակիցներին, բայց տարաբաղտաբար ժամանակն այնքան կարճ է, որ հազիւ թէ հնար լինի հասցնել այդ մինչև դեսպանաժողովի սկսվելը, որ ըստ երևութին լինելու է մարտ ամսին: Դորա համար անհրաժեշտ է, որ ամեն քաղաքում, ամեն գիւղում այն անձինքը, որոնք սրտով համակրում են գործին, արծարծեն այդ

անգործածութենից մոռանում է իր սովորածը, նա շատ չէ զանազանվում հասարակ և տգէտ մարդիկներից:

(Մեր խօսքերը այն անձանց աւելի հասկանալի կը լինին, որոնք մտածել են մեր այժմեան բարձր ուսումնատացած երիտասարդներից ստեղծել մի տիպ և ներկայացնել կամ բեմի վրա և կամ վէպի մէջ: Ամենևին չէ աջողվում մի այսպիսի աշխատութիւն, որովհետև նրանք կատարելագործված տիպեր չեն,—նրանք կեղծ բաներ են: Նրանք որոշ գոյն չունեն, միայն խայտառամուկ երևոյթներ ունեն, որոնք աչք են չլացնում....և այդ խայտառամուկ գոյները, կարծես, զարդարանքի համար են, և ժամանակը շուտով հնացնում է նրանց....)

Բոլորովին սխալ և միակողմանի կը լինէր մեր դատողութիւնը, եթէ այսքանը միայն լինէր մեր կարծիքը մասնագէտների մասին: Լինում են բացառութիւններ, որ բարձր ուսում ստացած մասնագէտը սեփականում է իրան գիտութիւնը, լաւ մարսում է նրան, և անցնելով հեղինակութիւնների վարդապետական սահմանից,—իր համար կազմում է մի ինքնուրոյն և որոշ տեսութիւն: Այնուհետև նա իր սեփական հայեացքն ունի իրերի վրա և դատում է իր խելքով: Եւ դրանց միջից ծնում են հանճարները: Բայց զարմանալին այն է, որ եթէ բաժանելու լինենք այսպիսիների թիւը, դարձեալ մեծամասնութիւնը կը մնայ ժողովրդական, և ժողովրդի ստոր դասից բարձրացած մարդիկների կողմը: Այդ այն պատճառով է, որ ժողովրդական մարդը, եթէ կարելի է այսպէս ասել, յղացած է մտնում գիտութեան մէջ. և գիտութիւնը միայն կատարելագործում է ծնունդը: Ժողովրդական մարդը նախ քան ոտք դնելը դպրոցի շեմքի վրա ունի իր աշխարհատեսութիւնը և գիտակցութիւնների հարուստ մթերք, որոնք թէև անմշակ են լինում, թէև իրանց սաղմնական վիճակի մէջ են գտնվում, բայց գիտութեան լոյսի տակ բուսնում, աճում և հասունանում են: Այս է պատճառը, որ ժողովրդի միջից դուրս եկած և բարձր ուսում ստացած մարդիկ լինում են ընդարձակ հայեացքի տէր և ունենում են բաղմակողմանի հմտութիւններ:

***

Այժմ խօսենք, թէ ինչ է Թերուսը:

Թերուսը շատ նման է բարձր ուսում ստացած ժողովրդական մարդուն, այն զանազանութեամբ միայն, որ դրա մէջ գիտութիւնը, ժողովրդական հմտութիւնների հետ համեմատելով, շատ փոքր մաս է կազմում: Այլ կերպ խօսելով, Թերուսը մի տեսակ բաղադրութիւն է, որի մէջ սեփական խելքը միացել է գիտութենից ստացած ճշմարտութիւնների հետ, թէև վերջինները՝ առաջինի փոքր մասն են կազմում:

Բայց բնութեան օրէնք է, երբ մարդու որ և է անդամը, կամ զգայարանքը խանգարված ու թոյլ է լինում, մնացածները աւելի զարգանում են և փոխարինում են նրան: Կոյր մարդիկը կարողանում են ճանաչել մէկին ոտքերի ձայնից, և ճանաչել կեղծ դրամը մատների շօշափելով: Խուլ ու մունջերի տեսանելիքը այնքան զարգանում է, որ նրանք դառնում են մի տեսակ ֆիզիօգնօմներ, և նայելով մարդու երեսին, հասկանում են նրա միտքը: Ձեռք չունեցող մարդկանց ոտների մատները այնքան զարգանում են, որ կարողանում են նրանցով գրել ու նկարել: Ինչ որ լինում է մարմնական կազմվածքի մէջ, նոյնը և լինում է մարդու մտաւոր կարողութիւնների մէջ: Անգրագէտները զարմանալի յիշողութիւն ունեն. մի անգրագէտ վաճառական կարողանում է իր բոլոր հաշիւները մտքումը պահել: Ռամիկ երկրագործները աւելի լաւ են գուշակում եղանակների փոփոխութիւնը, քան թէ մի հմուտ օդերևոյթաբան (մետեօրոլոգ:)

Այսպէս զարգանում է և Թերուսը:

Նա պատրաստի գիտութենից այնքան չէ ստանում, որ իրան բաւականութիւն տայ, և այս պատճառով նրա խելքը, դատողութիւնները և բոլոր մտաւոր զօրութիւնները աւելի ինքնուրոյն կերպով զարգանում են:

Խմորի մի փոքրիկ մասը թթվեցնում է ամբողջ զանգուածը: Գիտութիւնը, թէ և փոքր չափով ստացած, նոյն ներգործութիւնն է անում Թերուսի մէջ: Բաւական է, որ նա ըմբռնում է մի փոքրիկ նշոյլ գիտութեան լոյսից,—այդ նշոյլը նրա մէջ լայնանում է, և ընդարձակվելով, դէպի ամեն կողմ շառաւիղներ է ձգում:

Թերուսը պատրաստի հող ունի և այդ հողը ժողովրդական կեանքից ստացած ունակութիւնն է, որի մէջ ընկած ամեն մի սերմ անպտուղ չէ մնում:

Թերուսը մի պատուաստված ծառ է, որ իր վայրենի դրութեան մէջ ուժեղ և առողջ էր, խորին արմատներ ունէր արձակած մայր հողի մէջ: Նա քաղցր պտուղներ է տալիս, և նրա պտուղները ախորժելի են աւելի այն պատճառով, որ իրանց բնական և ինքնուրոյն գոյն, համ և հոտ ունեն:

Թերուսը, աւելի կատարելագործվելով, դառնում է մի տեսակ ինքնուս փիլիսոփայ, որը ընդհանուր մարդկային ճշմարտութիւնները՝ դուրս է բերում իր սեփական աշխատանքով, իր մտածութիւններով ու փորձերով: Շատ անգամ նա սխալներ է գործում և խոշոր սխալներ, բայց որպէս նրա ճիշդ գաղափարները իր առողջ դատողութեան արդիւնքն են,—այնպէս էլ գործած սխալները իր սխալներն են, օտարի խելքը չէ սխալեցնում նրան: Նա շատ անգամ սայթաքվում է, ընկնում է, որովհետև իր սեփական ոտների վրա է քայլում. վարձկան ձի չէ նստած: Նա մարդկային հեղինակութիւնների հետ գործ չունի և գուցէ չի էլ ճանաչում նրանց: Նա հետևում է մէկ հեղինակութեան միայն—դա է բնութեան համաշխարհական գիրքը: Այս հսկայական գրքից քաղում է նա ինչ որ իրան պէտք է:

Նա հետազօտում է, ճանաչում է մարդկութիւնը, մարդկութեան սրտի և կեանքի մէջ ուսումնասիրելով նրա պէտքերը: Նրա արտայայտած մտքերը մարդկութեան մտածութիւնների եզրակացութիւններ են, նրա ձայնը ժողովրդի սրտիցն է բղխում: Ինքն ժողովրդին է պատկանում և իր մէջ բովանդակում է ամբողջ ժողովուրդը:—Նա դառնում է մարգարէ, պատգամախօս և արտայայտում է ժողովրդի պահանջները:

Բայց մենք այսպիսի ինքնուսներ չունենք և չենք էլ ունեցել.—դրանք այն մարդիկն են, որ կոչվում են տաղանդներ, ժողովրդական բանաստեղծներ և փիլիսոփաներ:

Մենք ունենք անհամատեղ Թերուսներ միայն, որոնք մի խառնուրդ են գիտութեան և ժողովրդական մարդիկների, իրանց անզարգացած դրութեան մէջ: Այդ մարդիկը օգտաւէտ են լինում նրանով, որ զուրկ չեն առողջ և ինքնուրոյն մտածութենից, և զօրեղ ընդունակութիւն ունենալով, շուտով ըմբռնում են ամեն մի լուսաւոր գաղափար: Եւ այդ է պատճառը,

---

որ նրանք մի զարգացած մարդու ազդեցութեան տակ, կամ մի զարգացած շրջանի մէջ՝ այնքան զարգանում են, որ երևելի մարդիկ են դառնում: Մեզանում այս տեսակ շրջաններից առաջին օրինակը տուեց «Մշակի» խմբագրատունը, նա պատրաստեց և պատրաստում է մարդիկ, որոնք ապագայ են խոստանում...:

Ոչ ոք այնքան ճարպիկութեամբ չէ սեփականում և չէ իւրացնում ուրիշի մտածութեան ծրնունդը, որպէս Թերուսը: Եւ եթէ քննելու լինենք մեր Թերուսների գրաւոր աշխատութիւնները, կը տեսնենք, որ նրանք հետևողութիւններ են, միայն վարպետ կերպով ձևակերպված: Թերուսը և սահմանափակ մասնագէտը նրանով են միայն զանազանվում, որ առաջինը բանեցնում է իր խելքը, իսկ երկրորդը օտարի խելքը:

Թերուսը սուր ատամներ և լաւ ախորժակ ունի. նա ամեն բան մարսում է: Դուք տուեցէք նրան մտքեր միայն, նա իսկոյն մի բան կը շարադրէ: Եւ այս է պատճառը, որ նրանց գրվածները լինում են բաղմակողմանի. նրանք ամեն բանի վրա դատում են, ամեն բանի վրա գրում են և ամեն բանի մէջ խրվում են...:

Եւ շատ զարմանք չէ, երբ տեսնում ենք, որ մեր թէ գրական և թէ ուսումնարանական ասպարէզներում աւելի Թերուսներն են դեր խաղում: Դրանք կարող են օգտաւէտ լինել, որովհետև իրանք ճանաչել են ժողովրդին և ժողովուրդն էլ հասկանում է նրանց լեզուն.—միայն թէ չարլատաններ չը լինեն....

***

Խօսելով մեր ժողովրդական վարժապետների և ժողովրդական դպրոցների դրութեան վրա, մենք, սիրելի ընթերցող, քաց արինք մի ցաւալի վէրք միայն...ափսոս, որ չը պիտի կարողանանք ցոյց տալ նրա դարմանները: «Գաւառանի երկու ծայրն էլ ապականված է, որ կողմից և բռնելու լինինք, պէտք է մեր ձեռքը մուրտառենք....» Ուրեմն ժողովրդին ենք թողնում մտածել իր անելիքը...:

Մելիքդադէ

խնդիրը ժողովրդի մէջ, հասկացնեն նրա գործի էութիւնը, որպէս զի ստորագրութեան օրը գալուց, արդէն հողը պատրաստ լինի։ Իսկ մենք մեր կողմից խոստանում ենք իսկոյն յայտնել «Մշակի» միջնորդութեամբ թէ ինչ ձեով կը լինի այդ պետերբուրգում, արդեօք ուղղակի, թէ Վեհափառ Հայրապետի միջնորդութեամբ, որպէս զի ընդհանրութիւն և միանմանութիւն լինի գործի մէջ։

Մի բան միայն չը մոռանանք, որ կան բոպէներ, որոնք շատ սակաւ են կրկնվում պատմութեան մէջ և ով որ չը գիտէ արժանապէս օգուտ քաղել այդ բոպէներից, ինքն իր ձեռքով կընքում է իր դատավճիռը։

Ն. Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» էգուցվայ համարում սկսում ենք տպել օրիորդ Նինա Անդրէեվսկու սպանման գործը, որ այժմ քննվում է Թիֆլիսի նահանգական դատարանում։ Ահագին բազմութիւնը ամեն օր ներկայ է լինում դատարանի նստարանին։ Կանայք մանաւանդ բազմաթիւ են։ Գործի քննութիւնը գուցէ մի շաբաթից աւելի կը տևի։ Ամենօրեայ լրագիրների խմբագիրներին յատկացրած է առանձին սեղան։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ յունվարի 29-ին տեղական արհեստական ուսումնարանի վարչութիւնը կատարել է այդ ուսումնարանի հիմնադիր Միքայէլ Սահարբէգեանցի հոգեհանգիստը։ Ժողովուրդ գրեթէ բոլորովին չէ եղել։ Հանգ. Սահարբէգեանցը բացի ուսումնարանի շինութենից նուիրել է նոյնպէս 25 հազար ռուբլ, որի տոկոսով իւրաքանչիւր տարի սովորում են 12 չքաւոր երեխաներ, որոնք գիշերօթիկ են և 10 երթևեկ։

—

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ փետրվարի 19-ին շատ չքեղ կերպով է կատարվել Թագաւոր Կայսեր գահակալութեան տարեդարձի հանդէսը։ Վեհափառ Կաթողիկոսը հացկերոյթ է տուել Վաղարշապատում գտնված բոլոր զօրականներին։ Գեներալ Լազարեվ իր զօրքերով գտնվում է Վաղարշապատում։ Արդէն Վեհափառ Կաթողիկոսը յատկացրել է Ղազարապատը ռուսաց զօրքերի բնակութեան համար որոնք գեներալ Լազարեվի հրամանի տակ են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Պապը վախճանած ժամանակ իտալական կառավարութիւնը յայտնել է թէ ամեն կարգադրութիւններ արել է որպէս զի կոնկլավը (1) ազատօրէն անէ իր ժողովներն։ Կառավարութիւնը երաշխաւոր է եղել այդ բանի համար։

Հեռագիրը ասում է թէ աւստրիական կառավարութիւնը շատ գոհ է եղել պ. Դէպրէտիսի այդ յայտարարութենից։ Բայց Զենովայում և Միլանում ժողովուրդը ցոյցեր է արել կառավարութեան դէմ, պահանջելով որ պապի և կարդինալների պաշտպանութեան համար գրված օրէնքները որոնց գործադրվելու համար երաշխաւոր եղել է Իտալիան, ջնջվեն։ Զենովայի մէջ ժողովուրդը այն աստիճան գրգռված է եղել որ զօրքերը չէն կարողացել նրան զսպել։

1) Կոնկլավը կարդինալների ժողովն է որոնք հաւաքվում են մի նոր պապ ընտրելու համար։ Մինչև որ պապը ընտրվի, կարդինալները չեն կարող հաղորդակցութիւն ունենալ ժողովից դուրս ոչ մի անձի հետ։ Այս սովորութիւնը սկսել է 1270 թ-ից երբ Կլեմէնտ IV պապը երկու տարուց առաջ վախճանվել էր և կարդինալները դեռ չէին համաձայնված մի նոր պապ ընտրելու համար։ Ժողովուրդը ձանձրացել էր պապի ընտրութեան երկարաձգվելուց. ուստի արգելեցին կարդինալներին իրանց ժողովատեղից դուրս գալ, մինչև իրանցից մէկ պապ ընտրվելը։ Հին ժամանակ այնպիսի կանոններ էին դրել որ կոնկլավում հաւաքված կարդինալների կերակուրը օրից օր պակասացնում էին, այնպէս որ ութերորդ օրը տալիս էին նրանց հաց և գինի միայն։

Այդ օրէնքների 7-դ. յօդուածում այսպէս է գրված. «Ոչ մի քաղաքական պաշտօնատար, ոչ մի ոստիկան չէ կարող իր պաշտօնը գործադրելու համար մտնել գերագոյն—քահանայապետի բնակած պալատները և տեղերը, կամ այն տեղեր ուր հաւաքված են կոնկլավը կամ տիեզերական ժողովը, եթէ յատուկ թոյլատրութիւն չէ ստացել գերագոյն—քահանայապետից, ժողովից կամ կոնկլավից։» Նոյն օրէնքների 6-դ. յօդուածում գրված է մանաւորապէս պապի վախճանելուց մինչև նոր պապի ընտրվելը ժամանակամիջոցի համար. «Քահանայապետական աթոռը պարապ գտնված ժամանակամիջոցին, ոչ մի դատական կամ քաղաքական իշխանութիւն չէ կարող, ո և իցէ պատճառով, արգելել կամ սահմանափակել կարդինալների անձնական ազատութիւնը։ Կառավարութիւնը կը հսկէ որ կոնկլավի և տիեզերական ժողովների նիստերը չը խառնակվին, դրսից ո և իցէ յարձակում կամ բռնաբարութիւն լինելով նրանց վրայ։»

Իտալական կառավարութիւնը երաշխաւորած լինելով այս օրէնքների գործադրութիւնը, հէնց որ պապը վախճանվել է, զօրքերով պաշտպանել է Վատիկանը որ կարդինալները ազատ կերպով անեն իրանց ժողովները և ժողովրդի կողմից ճնշում չը լինի։ Վատիկանի շրջակայքում ժողովուրդը լեցվել է մեծ բազմութեամբ։ Կառավարութիւնը իմաց է արել կարդինալ Պէկկիին որ պապի ծախսարար սենեկապետն և փոխանորդ կարդինալն էր, թէ կառավարութիւնը ամեն կարգադրութիւն արել է առաքելական պալատի և կոնկլավի ապահովութեան համար։ Բայց երևի թէ Վատիկանը մերժել է ուղղակի յարաբերութիւն ունենալ իտալական կառավարութեան հետ և պապի ծախսարար սենեկապետ (camerlingue) կարդինալը իր մօտ է կանչել Վատիկանում Ֆրանսիական դեսպան պարոն Բոդին որ մինչև նոր պապի ընտրվելը մնայ Վատիկանում, բոլոր դեսպանների կողմից հսկէ կարդինալների և քահանայապետական պալատի պահպանութեանը և հարկաւոր եղած ժամանակ դիմէ իտալական կառավարութեան, նրա պաշտպանութիւնը խնդրելու համար։ Այս կերպով Վատիկանը մի միջին ճանապարհ ընտրած կը լինի որով թէ իտալական կառավարութենից կը պաշտպանվի և թէ ուղղակի նրա հետ յարաբերութիւն ունեցած չի լինի։

Պիոս IX-ի թաղումը շքեղ հանդէսով է կատարվել։ Սովորականին համեմատ պապի մարմինը դրել են Ս. Հաղորդութեան մատուռը և դուռը փակելով, դրան վանդակապատերից դուրս են թողել նրա սրբազան ոտքերը որ ջերմեռանդը արժանանայ համբուրել։ Այդ սրբազան ոտքերին հագցրած էին ոսկի բանված կարմիր հողաթափներ որոնց վրա եղած խաչը համբուրելու համար ամբոխը այնպէս ոգևորված և մեծ բազմութեամբ դիմել է որ նրանց մէջ կռիւ է ծագել և զօրքերը ստիպվել են միջամտել հանդարտեցնելու համար։

«Italie» լրագրի գրածին նայելով, կարդինալների արած առաջին ժողովում այն աստիճան յուզմունք և խռովութիւն է եղել որ կարդինալներից մի քանիսը մինչև անգամ խօսացել են թէ կը բաժանվեն և հերձուած կը կազմեն։ Կարդինալ դի Պիէտրօ մի քանի անգամ սպառնացել է նիսաը դադարեցնել։

Անգլիայի կարդինալ Մանինգ իր սակաւաթիւ կողմնակիցներով աշխատել է որ կոնկլավը չը գումարվի Հռոմ, այլ մի ուրիշ տեղ օրինակ Մալտա կղզին, պատճառելով թէ իտալական կառավարութիւնը բռնաբարած լինելով պապի աշխարհական իշխանութիւնը, կոնկլավի Հռոմ գումարվելը նշանակում է իտալական կառավարութեան արած այդ անիրաւութիւնը ընդունել։ Բայց իտալացի, գերմանացի և ֆրանսիացի կարդինալներից մեծ մասը հակառակվել են կարդինալ Մանինգին և 8 ձայնի դէմ 31 ձայնով որոշվել է որ կոնկլավը գումարվի Վատիկանում։ Կարդինալների ժողովում կարդացվել է նաև Պիոս IX-ի ձեռագիր մի կտակ որ խորհուրդ է տալի Վատիկանում գումարել կոնկլավը և երեք օր ժողով անելուց յետոյ ընտրել իր յաջորդը։ Մի այլ կտակագրով էլ պատուէրներ է արել եկեղեցու կառավարութեան վերաբերեալ։

«Köln. Zeitg.» լրագրում հրատարակված մի հեռագիր յայտնում է թէ ֆրանսիական դեսպան պ. դը Բոդ չը թոյլատրեց որ պապի վերաբերեալ իրեղէնները կոտրատեն և խորտակեն, ինչպէս որ հին ժամանակից մինչև այժմ սովորութիւն էր եղել պապի վախճանելուց յետոյ։

Պարոն Բոդ Վատիկանում, և իտալական կառավարութիւնն էլ Վատիկանից դուրս ամեն հսկողութիւն անելով, պապի ընտրութիւնը կատարված է առանց ժողովրդական յեղափոխութեան։ Զենովայում և Միլանում եղած ժողովրդական ցոյցերը արձագանք էին ունեցել Հռոմի հանրապետական կուսակցութեան մէջ և երկիւղ կար որ այդպիսի ցոյցեր կը լինեն նաև Հռոմում։ Հռոմից փետրվարի 9-ին «Independance Belge» լրագրին ուղարկված մի հեռագիր յայտնում է թէ ներքին գործերի մինիստրը սահմանափակել է հեռագիրներ ուղարկելու ազատութիւնը և նոյն երեկոյին արտասահմանի համար տրված շատ հեռագիրներ չեն ուղարկվել իրանց տեղերը։

Սովորութիւն է որ պապի վախճանելուց մինչև ինը օր թաղման հանդէսը կը կատարվի։ Տասներորդ օրը գումարվել է կոնկլաւը և ինչպէս հեռագիրը լուր բերեց, ընտրել է Պիոս IX-ի ծախսարար-սենեկապետ իտալացի կարդինալ Պէկկիին որ պապի վախճանելուց յետոյ տեղապահի պաշտօնն էր կատարում և որ միջազգային ընկերութեան հեռագրին նայելով, պատկանում է չափաւորական կուսակցութեան։

Արդեօք Պիոս IX-ի և Վիկտոր Էմմանուէլի մեռնելովը կը վերջանայ նաև պապական աթոռի յամառութիւնը իտալական օրինաւոր իշխանութեան դէմ։ Քիչ ժամանակից յետոյ նորընտիր պապի գործերը կը պատասխանեն այդ հարցումին. բայց այժմից կարելի է դուշակել որ եթէ ոչ այսօր, անշուշտ էգուց կամայ ակամայ կը համաձայնվի Վատիկանը Կուիրինալի հետ։

Figaro լրագրի գրածին նայելով, Պիոս IX և Վիկտոր Էմմանուէլ իրանց վերջին րոպէներում մի և նոյն տեսակ սաստիկ ջերմից նեղվել են։

Opinione լրագիրը հրատարակում է թէ գեներալ Գարիբալդին էլ հիւանդացել է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզի համաշխարհական արուեստանոցը կերակի օրեր առաւօտից մինչև կէսօր բաց կը լինի ամենի համար որ ձրիապէս մտնեն և պտտեն։ Հինգշաբթի օրերն էլ առաւօտից մինչև կէսօր բաց կը լինի նախակրթական վարժարանների աշակերտների համար։ Թոյլատրված է նաև ժողովներ կազմել համաշխարհական արուեստահանդէսում, նախնական ուսման բաղդատական մեթոդների վրա խորհրդակցելու համար։

—Փարիզի արուեստահանդէսում աշխատող չինացի գործաւորները ամենի հետաքրքրութիւն են շարժում։ Դրանք Չինաստանից եկած տասը կամ տասերկու գործաւորներ են որոնց մէկը կարկինը ձեռքին, միւսը սղոցը կամ քերիչը ձեռքին, չափում են, գծագրում, ծակում և փոքրիկ փայտի բազմաթիւ կտորներ իրար վրա յարմարեցնելով այնպիսի հիանալի և շքեղ չէնքեր են շինում որ միայն չինացիները կարող են շինել։ Այդ գործաւորները ծանրաղլուխ, աշխատասէր և շատ չը խօսող մարդիկ են. բայց երբ այցելուները հարցումներ են անում, շատ քաղաքավարի կերպով պատասխանում են։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Moniteur Universel» լրագրին հաղորդում են, որ օրերումս Փարիզի կոյրերի ինստիտուտում մէկ սրտաշարժ հանդէս կատարվեց։ Պ. Սիւ կոյրերի կոյր ուսուցիչը ստացաւ կառավարութենից պատուաւոր Լեգիոնի շքանշանը։ Այդ օրը ինստիտուտի դիրեկտոր պ. Պարա հրաւիրեց դասընթացը բոլոր կոյր ուսանողներին և նրանց առաջ կարդաց ներքին գործերի մինիստր պ. դը-Մարսերի նամակը։ Նամակի մէջ ասված էր, որ մինիստր ուրախ էր խնդրել հանրապետութեան նախագահից պատուաւոր Լեգիոնի շքանշանը պ. Սիւի համար։ Պ. Սիւ բուն փարիզեցի է։ Նա կուրացաւ 10 տարեկան հասակում։ Այդ ժամանակ նա սովորում էր այդ ուսումնարանում և 33 տարի է, որ նա ուսուցչի պաշտօն է վարում։ Նա պիանոյի շատ հմուտ լարող է և կարողացել է սովորեցնել այդ արհեստը իր բազմաթիւ աշակերտներին, որոնք այժմ աշխատում են իրանց օրական հացը հայթայթելու։

***

Լոնդոնի բրիտանական թանգարանը նորերումս ձեռք բերեց բաբիլոնեան ճաշակի շատ հետաքրքիր օրինակներ, որ գտան Սիրիայի մի գիւղի չրջականերում, որտեղ նախկին ժամանակներում գտնվում էր Բաբիլոնի Սերգուլ (Sergul) քաղաքը։ Այս հնութիւնների մէջ ամենից նշանաւորը համարվում է ահագին մեծութիւն ունեցող սև բազալտի կտորը, որ ծածկված է անուններով և կոչումներով, որոնցից շատերը մինչև այժմ բոլորովին անյայտ էին։ Այս գիւտը ինչպէս կարծում են, տասն և եօթ դարվայ բան է մինչև Քրիստոսի ծնունդը։ Բրիտանական թանգարանը ձեռք բերեց նոյնպէս վերջին ժամանակներում Կ. Պօլսի անգլիական դեսպան Լայարդի հաւաքած հայոց հնութիւնների ժողովածուն, որը շատ հետաքրքիր է գիտութեան և արուեստների համար։ Ժողովածուն բաղկացած է մեծ մասամբ բրոնզից շինած առարկաներից և զարդարանքներից, որոնք նախկին հայոց թագաւորների պալատների զարդարանքն էին կազմում։ Այս հնութիւնները պատկանում են 700 թ-ին մինչև Քրիստոսի ծնունդը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, փետրվարի 27-ին (մարտի 11)։ Գեներալ Դոնդուկով-Կորսակով կառավարիչ է նշանակվում Բոլգարիայի մէջ մնացող ռուսաց պաշարող զօրաբաժնի։ Վաղը սպասում են այն շոգենաւի գալուն, որ յատկացրած է Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 1-ին։ Ռուսաց ռուբլ Լոնդոնի վրա արժէ 26 6/10 պէնս, ռուսաց 100 ռուբլ արժէ Գերմանիայի վրա 222 մարկ, 50 ֆէն., Փարիզի վրա 272 ֆրանկ 25 սանտիմ։ Ռուսաց պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 1/8 ռ., երկրորդ 96 ռ., երրորդ 95 ռ. 50 կոպ., չորրորդ 95 ռ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 237 ռ. 55 կոպ., երկրորդ 236 ռ., արևելեան 93 ռ. 25 կոպ., պօլուիմպէրեալի գինն է ծախողը 7 ռուբլ 58 կոպ., իսկ առնողը 7 ռ. 50 կոպ։ Տրամադրութիւնը Բօրսայի վրա սկզբից թոյլ է, վերջը հաստատվում է։

Երկրորդ 5% փոխառութեան տիրաժը որ կատարվեցաւ մարտի 1-ին ներկայ 1878 թ. Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ.

№ սէրիի	№ տոմս.	տարած գումար
8703	24	200,000 ռ.
1798	21	75,000 »
3982	8	40,000 »
6400	46	25,000 »
9888	30	
19,398	37	10,000 »
12,692	38	
11,814	43	
16,923	39	
10,173	13	8,000 »
1107	4	
4643	32	
7233	49	
13,108	26	
10,246	50	
7214	37	5,000 »
10,175	25	
7358	9	
3525	41	
15,652	42	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ
ВЪ 1878 ГОДУ ВЪ БАКУ
ГАЗЕТЫ
БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ТРЕТІИ.

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р., на полгода 3 р. 50 к., на три мѣсяцъ 2 р., на 1 мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку, въ домѣ Дадашева, на Молотинской улицѣ, близъ гостиницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресують свои требованія исключительно: *въ Баку въ редакцію Бакинскихъ Извѣстій.*

Կառավարութեան թոյլտուութեամբ այս փետրվար ամսի 18-ից բացվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ, *Միքայէլեան կամուրջի վրա, Միրզոեվի տանը* № 1, 2, *նոր գրախանութ* «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ» (Центральная книжная торговля) *անունով։ Գրախանութում վաճառվելու են ամենատեսակ դասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով. նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի։ ԳՐԱԽԱՆՈՒԹԸ նպատակ ունի իր ճշտութեամբ և ձեռնտու վաճառմամբ նպաստել կրթութեան գործին, մանաւորապէս մեր հայ ուսումնարաններին։ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ կը ծախվին նմանապէս տեղական պարբերական թերթերը։ Պատուէրները կը կատարվին ամենայն արագութեամբ։ Անփող պատուէրները, մանաւանդ անծանօթ տեղերից, անկատար կը մնան։ Օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով* Тифлисъ «Центральная книжная торговля Михайловскій Мостъ, домъ Мирзоева № 1, 2։

ԵՂԲԱՐՔ Ն. Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

2—10

ԱՍՏՐԱԽԱՆԱՅ ՀԱՅՈՑ ՕՐԻՈՐԴԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ *մէջ կարօտութիւն կայ* ՀԱՅԿԱԿԱՆ, ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԼԻԱԿԱՆ *լեզուաց ծանօթ քաջափորձ* ՀԱՅ ՏԻԿՆՈՋ, *որ միտապէս ուսման ժամերը Դպրատան մէջ գտանելով՝ վերակացու լինի աշակերտուհեաց բարոյական կեանքի ուղղութեանը, խօսակցելով նոցա հետը մաքուր մայրենի լեզուաւ։ Ցանկացողները այժմէն իսկ կարող են դիմել Հոգաբարձական վարչութեանը պայմանները իմանալու՝ առաջարկմամբ ուսմանց և ծագման վկայագրոց, այսու հասցէիւ։* «Въ попечительство Астраханскихъ Армянскихъ Епархіальныхъ Духовныхъ училищъ:»

Մէկ երիտասարդ ցանկանում է ունենալ տներում ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ *Պատրաստում է նոյնպէս գիմնազիայի* ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ *և* ԵՐՐՈՐԴ *դասատունների համար Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը*

Молодой человѣкъ желаетъ имѣть *частные уроки.* Приготовляетъ дѣтей въ первый, второй и третій классы гимназіи. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“.

5—8

Въ книжномъ магазинѣ Ушіарова продается книга и описаніе древностей города Тифлиса, соч. Платона Іосселіани. Цѣна 50 к.

Ուշիարովի գրքերի խանութում ծախվում է «Թիֆլիսի հնութիւնների նկարագրութիւնը» հեղ. Պլատոն Իոսելիանի, գինը 50 կ.։ 3—4

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անդրկովկաս գաղթականների յայտնում է որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվումեն ամեն տեսակ հին և նոր շորեր։ Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ։ Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը, Դվորցովի փողոց, Արծրունու տուն, որտեղ և կը տանան տրված տացականներ իրանց ընծայաբերութեան համար։

14—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ գաղթականների յայտնում է որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ գաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ։ Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զիթախովի կանտորայում, Շադինովի քարվանսարայում, (Բազազխանի եաև)։

14—20 (1)

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 *ժամից մինչև* 2 *ժամ*

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ *օրերից։*

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցում Հոգաբարձական խորհրդարանի մէջ առաջիկայ մարտ ամսոյ 8-ին, երեկոյեան 7 ժամին, կը լինի աճրդախօսութիւն (առանց կրկնաճրդախօսութեան) կապալով տալու Հանգուցեալ Գրիգոր Շերգիլեանցից ընծայած կրպակը իր նկուղով, որ գտնվում է Հայոց, նոյն է, միջին փողոցումը։ Պայմանաթուղթը (կոնդիցիայ) կարելի է կարդալ Հոգաբարձութեան Դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամ։

ՊԱԴՈՇ

լաւ տեսակից վաճառվում է թէ ՀԱՏՈՎ ԵՒ ԹԷ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ։ *Ցանկացողները կարող են տեսնել Միքայէլեան կամուրջի վրա Լօնդոն Հիւրանոցի տակ, Մուրադովների խանութում։*

3—(3)

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՀԱՇՈՒԵՊԱՀ

Փորձված վաճառականական գործերում, գիտէ կարևոր լեզուները, ցանկանում է տեղ ունենալ, թէ վաճառականի մօտ և թէ ուրիշ ծառայութեան մէջ։ Պատրաստ է և քաղաքից դուրս ծառայել։ Հասցէն. «Մշակի» խմբագրատանը։

ПРИКАЗЧИКЪ

Опытный, какъ по операціонной, такъ и по письменной части. Знаетъ необходимые языки, ищетъ мѣсто, согласенъ и на выѣздъ. Адресъ: Редакція газеты „Мшакъ“

3—5

СѢМЯНА ШЕЛКОВИЧНЫХЪ ЧЕРВЕЙ

Итальянской породы, *вполнѣ здоровыя* продаются *въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства*, по 30 коп. за золотникъ, отъ 10 до 50 золотниковъ въ однѣ руки.

3—3

ՄԱՐՏԻ 2. — ՏԵՂԵԿԱՑՈՑՑ — ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մարտի 1-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	7	95
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1350	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1180	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 270—	270	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	15
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	—
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	10	—
» մաքսը վճարած	16	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	4	60
Աւլիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	70
Մոմը բնաճարպի (стеар.)	14	—
Մետաքս Նուխվայ . .	170	—
Կախետունը. . . .	90	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	50	—
Կոֆէն մօկօի. . . .	28	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկօյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա : . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	առաւօտ.	երեկոյեան
1 37		
4 8		
7 56		

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3, 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5· 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Ռէյխ աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակատ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակատ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակատ վենեբական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյխ աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄՕՍԿՎԱ. Լ. Խ. Ա. *կուղարկենք ձեզ «Մշակ»։ Դուք գրում էք, որ* «Московскія Вѣдомости» *լրագիրը ստորագրվել է «Մշակին» և դեռ ոչ մի համար չէ ստացել. չենք զարմանում, որովհետև չենք ստացել այդ լրագրի նամակը մինչև այժմ և համարներն էլ չենք ուղարկել։*

—ԶՈՒՐԶՈՒՆԱ. Կ. Տ. Ս. Մ. *Շնորհակալ ենք ձեր համակրութեան համար։ «Մշակի» համարները կուղարկենք։ Ցօդուածը դեռ չենք կարդացել։ Ժամանակին կը յայտնենք նրա ապագրութեան մասին։*

—ԱՍՏՐԱԽԱՆ. Պ. Պ. *Ձեր նամակից լուր քաղեցինք։*

—ԳԱՆՁԱԿ. Մ. Ղ. Մ. Ս. *Ձեր նամակը մինչև այժմ տեղի պակասութեան պատճառով չը տպվեց, իսկ հիմա նա բաւական հնացած է։*

Дозволено Цензурою 1 Марта 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ